

ՀՐԱՉՅԱ ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

**ԹՈՔԱԽՏԸ ԻԲՐԵՎ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՓՈԽԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ
ԼԵՎՈՆ ԶԱՎԵՆ ՍՅՈՒՐՄԵԼՅԱՆԻ «98.6°» ՎԵՊՈՒՄ*****DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.169*****ԱՄՓՈՓՈՒՄ**

Հոդվածում քննության է առնված ամերիկահայ գրող Լևոն Զավեն Սյուրմեյանի անգլերեն գրված «98.6°» վեպը: Վեպում պատկերված է Ամերիկայի թոքախտի բուժարաններում հայտնված իռլանդացի Դանիել Մուր անունով երիտասարդի կյանքի մի շրջանը: Հոդվածում առաջին անգամ հայ գրականագիտության մեջ փորձ է արվում թոքախտը դիտարկել իբրև վիպական գործողությունների հետնաբեմում ընթացող պատերազմի փոխաբերություն, ինչը թույլ է տալիս վեպը քննել էկզիստենցիալիզմի համատեքստում: Թե՛ պատերազմը, թե՛ թոքախտը՝ մահվան անընդհատ ու համատարած ներկայությամբ էկզիստենցիալ հարցադրումների առջև են կանգնեցնում մարդուն, մղում իր անհատականության ու խառնվածքի գործուն դրսևորման կամ հայեցողության ու ինքնաճանաչման: Հոդվածում ցույց է տրվում, թե ինչպես է Սյուրմեյանի հերոսը կատարում իր վերջնական ընտրությունը՝ մարդուն կործանման տանող բնազդների և վեր բարձրացնող հոգևորի, բնության և քաղաքակրթության, հույսի և հուսալքման միջև իբրև փրկության ճանապարհի ի վերջո ընտրելով ինքնաճանաչողությունը: Սյուրմեյանը հավատում է, որ մարդու փրկությունը հույսի, հոգևորի ու բնության մեջ է միայն, ինչով էլ պայմանավորված է հերոսի ապաքինման «հրաշքը»: Չքավորների այն բուժարանը, որում նա հայտնվում է առաջին անգամ բուժվելուց հետո, քաղաքում թոքախտից վերջնական ապաքինման համար անհրաժեշտ ուժերը անբարո կանանց հետ հարաբերություններում վատնելու արդյունքում, սոցիալական դժոխքի ստորին

պարունակ է հիշեցնում, որից հերոսը միայն Քրիստոսին գտնելուց հետո է կարողանում ելնել՝ «հարություն առնելով» կենդանի մեռյալներից:

Քանալի բառեր և արտահայտություններ. փոխաբերություն, հիվանդանոց, թոքախտ, էկզիստենցիալիզմ, բնություն, պատերազմ, մահ, օտարում:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

19-րդ դարի գրականության մեջ բավական տարածված էին թոքախտով հիվանդ մարդու կերպարն ու նրա ապրումների պատկերումը, ապրումներ, որ համահունչ էին, այսպես կոչված, «համաշխարհային վշտի» հետ, և թե՛ թոքախտը, թե՛ «համաշխարհային վիշտը» հավասարապես կարող էին դարի հիվանդություն կոչվել: Թոքախտով հիվանդ պոետներն իրենց քերթվածքներով արտահայտում էին մարդկությանը համակած «համաշխարհային վիշտը»: Թոքախտը գրականության մեջ հաճախ անվանում էին մի բառով, որ ուղղակիորեն չի արտահայտում հիվանդության կապը մարդու մարմնի որոշակի օրգանի՝ թոքերի հետ, և հիվանդության առավել գեղարվեստական անվանման իրավասություն է ստանում կարծես՝ հյուծախտ, որ 19-րդ դարի գրականության մեջ «համաշխարհային վշտի» փոխաբերությունն է դառնում:

20-րդ դարի գեղարվեստական գրականության մեջ՝ մասնավորապես արդեն արձակում թոքախտը փոխաբերական բոլորովին այլ գործառույթ է սկսում կատարել. այդ փոփոխությունն էապես պայմանավորված էր թոքախտի բուժման հիվանդանոցային կազմակերպման եղանակով: Առաջին հակատուբերկուլյոզային դիսպանսերը 1887 թ., Էդինբուրգում է բացվել, որից հետո նոր միայն Եվրոպայում ու ԱՄՆ-ում տարածում են գտել թոքախտի բուժկանխարգելիչ հաստատությունները: Սրանով է պայմանավորված, որ հենց 20-րդ դարում են գրվում թոքախտի բուժարանների կյանքը պատկերող փոքրակտավ կամ լայնակտավ արձակ ստեղծագործությունները՝ Թոմաս Մանի «Կախարդական լեռը» (1924), Սոմերսեթ Մոեմի «Առողջարանը» (1938), Կոնսանտին Ֆեդինի «Արկտուր առողջարանը» (1940), Կամիլո Խոսե Սելայի «Հանգստի տունը» (1943),

Օյվին Բոլսթադի «Կարմիր բեգոնիան (1947), Կոծիրո Սերիձավայի «Գիրք Աստծու մասին»-ը (1993) և այլն: Այդ ստեղծագործությունների թվին է պետք դասել նաև Շահան Շահնուրի «Յարալեզներուն դաւաճանութիւնը» (1933) շարքի «Չաթոսթե» պատմվածքն ու Լևոն Չավեն Սյուրմեյանի «98.6°» (1950) վեպը: Այս ստեղծագործությունների մեծ մասում թոքախտը փոխաբերական իմաստ ունի: Մեր հոգվածում փորձել ենք քննել թոքախտն իբրև փոխաբերություն Լևոն Չավեն Սյուրմեյանի «98.6°» վեպում: Առաջին անգամ հիվանդությունը որպես փոխաբերություն է դիտարկել ամերիկացի փիլիսոփա, գրականության, կինոյի ու թատրոնի տեսաբան, քննադատ և գրող Սյուզեն Սոնթագը՝ հանգամանորեն վերլուծելով թոքախտի, քաղցկեղի և ՁԻԱՀ-ի փոխաբերական կիրառությունները հանրային գիտակցության և գեղարվեստական մտածողության մեջ:

Վեպը՝ իբրև ժանր (Չարեհ Որբունին այն անվանում է «պատրուակ», «որով գոյութեան կը կոչուի անձանօթ հետազօտութիւն մը, որ լինելութեան հարցն է» **(Որբունի Զ., 2020)** և ինչ-որ իմաստով նաև պայմանական, «կամերային» միջավայրը՝ նաև կամ գնացք, բանտ կամ հիվանդանոց՝ իբրև գործողության վայր, գրողին գոյաբանական հարցերի առավել լայն շրջանակ հետազոտելու և առավել խորքային ընդհանրացումներ կատարելու մեծ հնարավորություն է ընձեռում: Հիվանդանոցը, որում նույն հիվանդությամբ՝ թոքախտի կամ քաղցկեղի, այսինքն մահվան դատապարտված տարբեր ազգության կամ հասարակության տարբեր խավերի ներկայացուցիչներ են հավաքվում, որպես փակ ու մեկուսի կենսատարածք թե՛ մարդկային համակեցության, թե՛ գոյության ֆենոմենների խորքային հետազոտության պայմանական միջավայր է դառնում՝ մարդկային համակեցության ու կեցության միկրոմոդել: «Անձնականն այստեղ դառնում է հանրային,- խորհում է նորվեգացի Օյվին Բոլսթադի «Կարմիր բեգոնիա» վեպի հերոսը:- Հիվանդանոցը փոքրիկ հասարակություն է, ուր մասնավորը գերծ է գաղտնիքի քողից և բաց կողմնակի հայացքի համար **(Bolstad Փ., 1947)**: Եվ այս իմաստով, այս թափանցիկության շնորհիվ էլ հիվանդությունը գրականության մեջ դիտարկելի է դառնում իբրև հանրային կամ

քաղաքակրթական ակտերի փոխաբերություն: Հատկանշական է, որ թոքախտի բուժարանների մասին պատմող ստեղծագործությունների զգալի մասը համաշխարհային պատերազմների շրջանում է գրվել: Սովոր, որ պատերազմների ժամանակ դառնում է համատարած, նպաստում է թոքախտի տարածմանը. այն այս երկու չարիքների սոցիալական համեմատության եզրն է: Բայց այս իրողություններն ունեն նաև գոյաբանական համեմատության եզր՝ որոշակի կապ գոյություն ունի մարդկային «անբուժելի» հիվանդության ու պատերազմի՝ «ոչ բնական» ու լայնամասշտաբ մահվան այս երկու խորհրդանիշների միջև: Այս կոնտեքստում է քննելի նաև 20-րդ դարի առաջին կեսի թոքախտի ամերիկյան բուժարանների մասին պատմող Լևոն Զավեն Սյուրմեյանի «98.6°» վեպը, որ գրվել և լույս է տեսել անգլերեն, և հայ ընթերցողին հասել ավելի քան կեսդարյա ուշացումով:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Լևոն Զավեն Սյուրմեյանի այս վեպին արված գրականագիտական անդրադարձներից մեկում Ա. Մուրադյանն իրավամբ նկատում է, թե վեպի ստեղծման ժամանակ «ամերիկանացած» Սյուրմեյանն արդեն քաջաճանոթ էր համաշխարհային դասական ու ժամանակակից գրականությանը (**Մուրադյան Ա., 2013**): Եվ իսկապես նրա «98.6°»-ը, ավելի քան նախորդ՝ «Ձեզ եմ դիմում, տիկնայք և պարոնայք» կենսագրական վեպը, արտահայտում է 20-րդ դարի համաշխարհային և ամերիկյան գրականության միտումները, համադրում գրական տարբեր հոսանքներին բնորոշ իրողություններ, ուստի հոդվածում կիրառված է համեմատական գրականագիտության մեթոդը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հայ գրականագիտության մեջ անդրադարձներն այս վեպին այնքան էլ շատ չեն (Նուպար Ակիշյան, Սուրեն Դանիելյան, Արփի Մուրադյան) և հիմնականում անհրաժեշտ խորությամբ, այսինքն համաշխարհային գրականության կոնտեքստում չեն քննում այն: Ի դեպ Սյուրմեյանը ամերիկյան համալսարաններում իբրև դասագիրք օգտագործված «Արձակի տեխնիկա. չափ և

խենթություն» (1968) գրքում, որի տեսական ընդհանրացումները համաշխարհային գրականության հարուստ փորձի հիման վրա են արված, վիպական տեխնիկայի ինչ-ինչ խնդիրների տեսանկյունից անդրադարձել է նաև Թոմաս Մանի «Կախարդական լեռը» վեպին (**Սյուրմեյան Լ. Զ., 2008**): Հայ գրականագիտության մեջ փորձ է արվել Սյուրմեյանի վեպի ժանրաձևը բնորոշել որպես ինքնակենսագրական (**Մուրադյան Ա., 2013**), ինչը խիստ մոտավոր և վեպի խորքային քննությանը գրեթե ոչինչ չտվող բնորոշում է: Ակնհայտ է, որ թոքախտի բուժարանների մասին պատմող ստեղծագործությունների զգալի մասը գրողների թոքախտով հիվանդանալու և ապաքինվելու փորձառությունը պիտի ներկայացնեին (թվարկված վեպերից բացառություն պիտի արվի Մանի «Կախարդական լեռը», որ հեղինակը մտահղացել է թոքախտով հիվանդ կնոջը Դավոսի առողջարան կատարած տեսայցի ժամանակ): Դրանց մեջ կան նաև ինքնակենսագրական եղանակով գրվածները, ինչպես Սերիձավայի եռագրության վեպերից մեկը, որ շարադրված է առաջին դեմքով, ինչն ինքնակենսագրական վեպի պատումային հատկանիշներից է, և այն Սյուրմեյանը «ինքնակենսագրական մեթոդ» է անվանում (**Սյուրմեյան Լ. Զ., 2008**): Մինչդեռ իր վեպը նա շարադրել է երրորդ դեմքով՝ իռլանդացի Դանիել Մուրի անունից. և՛ այլազգի հերոսի (Սյուրմեյանի պարագայում տարագրության փորձը կենսագրության էական բաղադրիչ էր, ուստի այլազգի հերոսի ընտրությունը սահմանափակում է ինքնակենսագրական տարրի ներմուծման հնարավորությունը) և՛ երրորդ դեմքով պատումի ընտրությամբ վեպը կարծես դադարում է ինքնակենսագրական լինելուց: Ըստ որում, «98.6°»-ը գրված է երրորդ դեմքով, բայց ոչ օբյեկտիվ պատումի եղանակով կամ այսպես կոչված «ամենագետ հեղինակի» տեսանկյունից, այլ բացառապես երրորդ դեմքի սուբյեկտիվ պատումի մեթոդով, հետևապես կարող էր շարադրված լինել նաև առաջին դեմքով: Ուրեմն ինչո՞ւ է հեղինակը երրորդ դեմքի տեսանկյունն ընտրելու պարագայում դիմել սուբյեկտիվ պատումի մեթոդին, եթե ոչ «ինքնակենսագրական մեթոդից» ու ինքնակենսագրականությունից հրաժարվելու

միտումով: Առաջին դեմքով պատումի հետ է կապվում նաև ինքնակենսագրական վեպի մյուս կարևոր հատկանիշը՝ խոստովանական եղանակը, ինչից գրողը ևս հրաժարվել է: Ինքնակենսագրական վեպը, միտված լինելով վիպական ֆաբուլայի ու հեղինակի կենսագրության նույնացման, նաև որոշակիորեն ամբողջականավարտուն կյանքի իմաստավորման է միտված, այլ կերպ ասած, այն «մի կյանքի պատմություն»-խոստովանություն է: Մինչդեռ Սյուրմեյանի վեպը Դանիել Մուրի կյանքի մի փուլն է պատկերում միայն: Եվ վերջապես, մարդկային հասարակության կամ գոյության պայմանական մոդելի կիրառումը, ինչպիսին Սյուրմեյանի վեպում թոքախտի բուժարանն է, ևս խորթ է ինքնակենսագրական վեպի պոետիկային: Ինչ վերաբերում է գրողի կենսափորձի, ապրումների ու տպավորությունների, կենսագրական այլևայլ շերտերի առկայությանը, ապա դրանք ոչ մի դեպքում, թեկուզ պայմանականորեն, չպետք է համարվեն ինքնակենսագրական վեպի հատկորոշիչներ, այլապես համաշխարհային գրականության զգալի մասն ստիպված ենք լինելու ինքնակենսագրությունների շարքը դասել: Եվ ի վերջո, ժանրային նման որոշարկումը վեպի քննությունը դեպի կենսագրական շերտերի վերհանում է ուղղորդում, այնինչ հենց կենսագրականությունից վերացարկված գեղարվեստական ընդհանրացումների շնորհիվ են վերոնշյալ ստեղծագործություններից լավագույններում թոքախտի բուժարանները դառնում համակեցության ու կեցության միկրոմոդելներ, հիվանդությունը՝ փոխաբերություն, այդ ստեղծագործությունները՝ սոցիալական կամ էկզիստենցիալ պրիտչաներ: Կարելի է արդյո՞ք թոքախտը Սյուրմեյանի վեպում համարել պատերազմի փոխաբերություն: Սոնթագը բերում է հիվանդության դեմ պայքարը որպես պատերազմի փոխաբերություն կիրառելու օրինակներ (**Сонтаг С., 2016**): «Անհատականության կորուստը պատերազմի ժամանակ ըստ էկզիստենցիալիզմի» վերնագրող հոդվածում տոտալ պատերազմը մենք համեմատել ենք «անդեմ չարիքի, բնական մեծ աղետի կամ համաճարակի» հետ, նկատելով, որ «Սարտրն իր «Տարօրինակ պատերազմի օրագրերում» խոսում է «պատերազմը որպես ժանտախտ» վերապրելու մասին, իսկ Ալբեր

Կամյուի «Ժանտախտը» վեպում համաճարակը տոտալ պատերազմի փոխաբերություն է հենց, չարիք, որի դեմ մարդն արդեն անզոր է, թեև ինքն է իր ոգու ուժով կյանքի կոչել տեխնիկան, որը Յասպերսի կարծիքով մարդու համար փոխարինել է բնությանը կամ դարձել «երկրորդ բնություն», որը դուրս է եկել վերահսկողությունից և մարդկության հավաքական գիտակցությունը դեռ չի էլ հասել այդ անկասելիության վտանգի սոսկումին. «Վտանգ կա,– իր «Պատմության ակունքներն ու նպատակը» ուսումնասիրության մեջ Յասպերսն է գրում,– որ մարդը *շնչահեղձ* է լինելու այն երկրորդ բնության (ընգծումը մերն է) մեջ, որ տեխնիկայով է ստեղծում, այն դեպքում, երբ աննվաճ բնության հետ հարաբերման մեջ, մշտապես քրտնաջան աշխատանքով փորձելով իր գոյությունը պահպանել, մարդը ներկայանում է մեզ անհամեմատ ազատ» (**Saribekyan H., Ordukhanyan E., Sukiasyan H., 2023**): Իսկ ինչ են իրենցից ներկայացնում համաշխարհային պատերազմները, եթե ոչ այդ «երկրորդ բնության», այսինքն մարդուն ոչնչացնող տեխնիկայի տոտալ կիրառում: «Երկրորդ բնություն», որում մարդը «շնչահեղձ» է լինում և բնության հետ ներդաշնակությունը վերագտնելու իր էության խորքից բխող պահանջ է զգում: Հենց այդպիսին է ներկայանում բնությամբ շրջապատված թոքախտի բուժարանը, որում Սյուրմեյանի հերոսը ձգտում է դեպի բնությունը: «98.6°»-ը հագեցած է բնապատկերներով, հերոսի կողմից բնության վերապրման հարուստ զգացումներով և թոքախտից «շնչահեղձ» լինող մարդու՝ դեպի բնությունը վերադառնալու մղումով ու տենչանքով, և նույնքան հետաքրքիր է, որ Սյուրմեյանի հերոսը, դադարելով բուժումն ու վերադառնալով քաղաք(ակրթություն), կրկին հիվանդանում է թոքախտով: Թոքախտը վեպում պատկերվում է որպես չարիք, որի դեմ առանձին մարդը անզոր է պայքարել (այնպիսին, ինչպիսին պատերազմն է): Սյուրմեյանի վեպում ռազմական իրադարձություններ պատկերող տեսարաններ չկան, բայց վիպական գործողությունները պատերազմի ժամանակ են կատարվում, հետևաբար պատերազմը բեմի ետնամասում ընթացող իրականություն է. մեկը ռազմաճակատ

է մեկնում, մյուսը՝ թոքախտի առողջարան, որտեղ պիտի պայքարի մեկ այլ անվերահսկելի չարիքի դեմ: Հետաքրքիր է, որ Սյուրմեյանի վեպի վերջը և հերոսի ապաքինումը, որ մյուս հիվանդների համար ընկալվում է որպես հրաշք, զուգադիպում է պատերազմի ավարտի հետ: Սյուրմեյանը նկարագրում է, թե ինչպես է իր գրեթե մահամերձ հերոսը վերջնականապես ապաքինվում նոր հայտնագործված ստրեպտոմիցինի շնորհիվ, և նրա բուժումը համարվում է հրաշք, իսկ ստրեպտոմիցինը որպես թոքախտի առաջին արդյունավետ դեղամիջոց հայտնագործվել է Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին տարում: Այսպես է ավարտվում Սյուրմեյանի վեպը. մարդկությունն սկսում է ապաքինվել իրեն վարակած պատերազմի ախտից: Այս փոխաբերությամբ հանդերձ Սյուրմեյանի վեպը, ի տարբերություն Թոմաս Մանի «Կախարդական լեռը» վեպի դժվար է այլաբանություն կամ պրիտչա համարել, և այս տարբերությունը նախ և առաջ գերմանական փիլիսոփայական վեպի և ամերիկյան գործողության վեպի տարբերությամբ է պայմանավորված: «Ժամանակակից ամերիկյան գրականության մեջ ավելի շատ գործողություն կա: Տեսարանը և դրաման բնական են թվում այս երկրի համար: Ամերիկացին գործողության մարդ է», - գրում է Սյուրմեյանը (**Սյուրմեյան L., 2008**) և ինքն էլ գերազանցապես ամերիկյան «գործողության վեպի» ավանդույթներն է շարունակում: «98.6°»-ը գերազանցապես տեսարաններով է գրված, «Կախարդական լեռը»՝ ամփոփումներով, որոնցում գերակշռում են փիլիսոփայական ու ինտելեկտուալ խորհրդածություններն ու հղումները: Եթե Սյուրմեյանի վեպում թոքախտը կարելի է համարել պատերազմի փոխաբերություն, ապա Մանի վեպում այն («Փոխաբերությունը տրոպի այնպիսի դեպք է, երբ ուղիղ իմաստով նշանակված առարկան անուղղակի նմանություն ունի փոխաբերական նշանակություն ունեցող առարկայի հետ (**Томашевский Б., 1996**)) ոգեղենության փոխաբերությունն է: Առողջարանը Մանի վեպում լեռան վրա է տեղակայված: «Լեռներում է ապրում միայն ազատությունը», - երգում է Հանս Քասթորփը (**Манн Т., 1959**): Թոքախտը, հյուծելով մարդու մարմինը, սրում

է նրա ոգեղեն ունակությունները: Բոլոր հիվանդությունները մարդուն գամում են իր մարմնին, և միայն թոքախտն է, որ մարդուն դարձնում է ոգեղեն արարած **(Мани Т., 1959)**: Եվ դժվար էլ չէ նկատել, թե ընթերցանության, փիլիսոփայական զրույցների ու խորհրդածությունների շնորհիվ առողջարանում անցկացրած յոթ տարիների ընթացքում ոգեկան ինչ զարգացում է ապրում վեպի գլխավոր հերոսը, որ մարդկային գոյությունն ու ժամանակը լեռան բարձունքից է դիտում ու զննում՝ օտարվող հայացքով ու վերացարկվող մտածողությամբ: Սա է իրական պատճառը, և ոչ թե տիկին Շոշայի հանդեպ սերը, որ զարմկին տեսակցության եկած առողջ Հանս Քասթորփին այդպես էլ չի ցանկանում լքել առողջարանը և այստեղ է հիվանդանում. կարելի է ասել, թե նրա հիվանդության իրական պատճառը ոգեղեն զարգացում ապրելու ներքին ցանկությունն է: Իսկ ոգեղեն զարգացումը մահվան նախապատրաստություն է՝ հրաժարումների ուղի, աշխարհիկ կյանքի ու ձգտումների հանդեպ մահվան ձգտում: Այս իմաստով որոշակի զարգացում է ապրում նաև Դանիել Մուրը: Սակայն «Կախարդական լեռը» վեպում, ի տարբերություն Սյուրմեյանի վեպի, ժամանակի, պատմության, քաղաքականության և այլ հարցերի շուրջ սևեռում ու ծավալուն խորհրդածություններով հանդերձ երկրորդական են հիվանդության և դրա բուժման մանրամասն նկարագրությունները, թոքախտով հիվանդի հոգեբանությունն ու այդ հիվանդության բնույթի ու դրանով պայմանավորված մարդկային արարքների հոգեբանական պատճառաբանվածությունը, սոցիալական ուսումնասիրությունը. այս վեպը վեր է կանգնած նման խնդիրներից, այն գաղափարների զարգացման վեպ է ի տարբերություն Սյուրմեյանի «98.6°»-ի: Նույնիսկ այս երկու վեպերի համար որոշակի կարևորություն ունեցող սիրային սյուժետային գծերի համեմատությունն է հետաքրքրական տարբերություններ բացահայտում: Քասթորփի՝ Շոշայի հանդեպ սիրո հոգեբանական վերապրումը կարծես երկրորդական է, Քասթորփի համար սերը կարծես ոչ թե զգացմունք է, այլ սևեռում գաղափար, և նա կարծես այդ սիրո «կորուստն» անգամ ցավով չի վերապրում. նրա համար էականը կարծես ոգեկան զարգացումն է, ոչ թե

նյութական կամ մարմնական նվաճումները: Դանիել Մուրի դեպքում կարևորվում է սիրո և սիրո կորստի ցավն ու հոգեբանական վերապրումը. այն նույնիսկ որոշակի էկզիստենցիալիստական երանգավորում է ստանում. Դանիելը հասնում է իր սիրուն, բայց նրա սիրած աղջիկը՝ Միլդրեդը կարճ ժամանակ անց, բուռն սիրային գիշերների պատճառով սպառելով թոքախտի դեմ պայքարի համար անհրաժեշտ ուժերը, մահանում է: Առհասարակ թոքախտի բուժարանների մասին պատմող շատ ստեղծագործություններում է առկա սեռային հարաբերության այս գիծը: «Այո՛, այո՛, պարոնայք,- ասում է «Կախարդական լեռը» վեպում առողջարանի գլխավոր բժիշկ Գոթֆրադ Բերենսը,- այդ անիծյալ լիբիդոն... թոքախտը սրված սեռական գրգռման հետ է կապված» (**Манн Т., 1959**): Բայց այս ամենը Թոմաս Մանի վեպում սեռային կապերի զննության չի վերաճվում: «Թոքախտը,- գրում է Սյուզեն Սոնթագը,- ընկալվում է իբրև սեռական հակումներն ուժգնացնող միջոց, իբրև սեռական բացառիկ գրավչությամբ օժտող հիվանդություն» (**Сонтаг С., 2016**). Եվ սա է պատճառը, որ այսօրինակ վեպերում երբեմն կարևորություն է տրվում սեռային հարաբերություններին ու դրանց պատկերմանը: «Թէ որովհետեւ հիւծախտը սեռային ախորժակ կը գրգռէ,- ասում է Շահնուրի Զաթութեի հերոսը,- թէ որովհետեւ հիվանդները բոլորն ալ երիտասարդներ են, որոնք ամբողջ օրը ընելիք չունին եւ կը ծանծրանան, մերինին նման ապաստարաններուն մէջ սանձարձակ կը քալեն սեռային յարաբերութիւնները: Այդ իսկ պատճառաւ անպակաս են բախում, խզում, տագնապ» (**Շահնուր Շ., 2016**): Թոմաս Մանի վեպն այս իմաստով բացառիկ է. այն առանձնակի կարևորություն չի տալիս մարդկության հասարակական կյանքը շարժող մեխանիզմների քննությանը՝ սեռային հակումների, բախումների, խզումների, տագնապների նկարագրությանը, չի իջնում «չափազանց մարդկայինի», սոցիալական իրականության, մարդկային կենցաղի և հոգեբանականության, առավել ևս նատուրալիստական նկարագրությունների աստիճան: Եվ ոչ էլ բուժման պրոցեսների մանրամասն նկարագրությունների կարելի է հանդիպել այդ վեպում, ինչպես Բոլսթադի կամ Սյուրմեյանի՝ թոքախտի

դրսևորման ու բուժման նատուրալիստական նկարագրություններով հագեցած վեպերում: ««98.6°» վեպը գրելիս հաշվի չառա այս նախազգուշացումը,-գրում է Սյուրմեյանը: - Փորձեցի կյանքը ճշմարտացի պատկերել հիվանդասենյակներում, նշանաբանս բանաստեղծական ուժգնությունն էր: Գիրքը գրելու համար չորս տարի պահանջվեց: Գրախոսներից մեկն այն անվանեց «թոքախտի օձաբուն»: Մեկ այլ գրախոսականի վերնագիրն էր. «Պատմությունը ցնցում է բոլոր զգայարանները»: Հիմա հասկանում եմ, որ չէր ապահովված պատմության հեռավորությունը, որոշ տեղերում նկարագրությունը շատ էր վառ: Գերադասելի կլիներ հանդարտ, հեգնական երանգը, ընդ որում հեգնանքը հեռավորություն է պահանջում (**Սյուրմեյան Լ. Զ., 2008**): Մեկ այլ տեղ, Սյուրմեյանն ինքն է նույն հեգնանքի ու հեռավորության կապակցությամբ հիշատակում Մանի վեպը. «Եթե Մանը պատմող դարձներ Հանս Քասթորփին կամ օգտագործեր նրա տեսակետը, կհաջողեր ներկայացնել շվեյցարական առողջարանի առօրյա կյանքի ավելի մտերմիկ և լարված, սակայն համեմատաբար նեղ ու սահմանափակ պատկերը՝ զոհաբերելով նյութի մեծ մասը և փիլիսոփայությունն ու հեգնանքը, որ այս գրքի ականառու առանձնահատկությունն են: Երբ պատմողը պատմության ներսում չէ և չի մասնակցում գործողությանը, նա կարող է ցանկության դեպքում զգալի հեռավորության վրա մնալ դրանից, իսկ հեռավորությունը, ինչպես ասացինք, անհրաժեշտ է հեգնանքի համար» (**Սյուրմեյան Լ. Զ., 2008**):

Սյուրմեյանը, ճիշտ է, որոշ իմաստով, թերագնահատում է իր վեպը, բայց սոցիալական բովանդակությունն ու նատուրալիստական տեսարանները, տեքստը զրկելով ինտելեկտուալությունից, որոշակի կենսականություն են հաղորդել դրան:

Չքավոր թոքախտավորներով լցված Մարենգոյի հիվանդանոցի դռների վրա Դանտեի դժոխքի մուտքի հայտնի գրությունը կարող էր լինել, ոչ միայն պատճառով, որ հիվանդանոցի անմարդկային մթնոլորտը Սյուրմեյանի հերոսին հուսալքության շեմին է հասցնում, այլև թոքախտի բուժարանը սոցիալական դժոխք է հիշեցնում՝ կյանքի հատակում հայտնված չքավոր ու թշվառ մեղավորների տառապանքների պատկերմամբ, և վեպի հենց այս հատվածում է

թոքախտը երևում որպես սոցիալական չարիք, չքավորության ախտ: Սյոնթագն է նկատում, թե «թոքախտը հաճախ է պատկերվում որպես չքավորության, զրկանքների, մաշված հագուստի, հյուծված մարմինների, չջեռուցվող կացարանների, հիգիենայի բացակայության ու աղքատիկ սննդի հիվանդություն» (Сонтак С., 2016): Թոքախտի մասին տարածված միստիֆակցիաներից մեկն էլ այն է եղել, որ այդ ախտորոշումը Սյուրմեյանի վեպի հիմքում ընկած ժամանակաշրջանում դեռևս որպես մահվան դատավճիռ է ընկալվել, և բնականաբար մահվան անխուսափելիության հետ զուգորդվող թոքախտի պատկերումը գրողի առջև էկզիստենցիալ խնդիրների արծարծման լայն հորիզոններ է բացել, ինչպես և պատերազմը: Մահվան համատարածությունը, ինչպես պատերազմի, այնպես էլ թոքախտի դեպքում, էկզիստենցիալիզմի համար իսկապես բավական պարարտ հող է: Ինչպես 20-րդ դարասկզբի փիլիսոփայության մեջ մտայնություն էր տարածված, թե պատերազմը՝ մահվան՝ ամպերի պես երկինքը ծածկած համատարածության պայմաններում մարդուն իր ես-ը բացահայտելու, անհատականությունը դրսևորելու պայման է դառնում, նույն մտայնությունն է եղել նաև թոքախտի վերաբերյալ: «Հենց թոքախտը շեշտադրեց հիվանդության «անհատականությունը» և գաղափարը, որ մահվան հայացքի առջև մարդիկ ավելի խորությամբ են ճանաչում իրենց ես-ը. հիվանդության (թոքախտի) պատկերումներում կարելի է հետևել անհատականության ժամանակակից գաղափարի առաջացմանը, որը քսաներորդ դարում ոչ միայն չկորցրեց իրեն բնորոշ նարցիսիզմը, այլև ավելի ագրեսիվ ձևեր ընդունեց, - գրում է Սոնթագը,- Հիվանդությունը մարդկանց դարձրեց «հետաքրքրական». սկզբնապես այդպես էին բնորոշում նաև «ռոմանտիկությունը» (Շլեգելը «Հունական պոեզիայի ուսումնասիրության մասին (1795) էսսեում «հետաքրքրական» անվանում է ժամանակակից, այսինքն ռոմանտիկական պոեզիայի իդեալ): «Բացարձակ առողջության իդեալը,- գրում է Նովալիսը 1799-1800 թթ.,- հետաքրքրություն է ներկայացնում միայն գիտական տեսանկյունից»,

իրական հետաքրքրություն է ներկայացնում միայն հիվանդությունը, որ «հարաբերվում է անհատականության հետ» (Сонгаг С., 2016): Վերջին դիտարկումը հետաքրքրական է հատկապես Սյուրմեյանի գեղագիտական հավատամքի առնչությամբ: «Ոչ մի ծեծված կերպար». այսպես է վերնագրել Սյուրմեյանն իր «Արձակի տեխնիկա. չափ և խենթություն» գրքի գլուխներից մեկը: Սյուրմեյանը հետաքրքրական, վառ ու անհատականացված որոշ կերպարներ է կերտել, որոնց մեջ ամենատպավորիչը Գրիմարն է, որի սուր հումորը կենսական կրակի վերջին բռնկման գիտակցումից է հորդում կարծես, բայց նա իր անսպառ կենսասիրության շնորհիվ էլ հաղթանակում է մահին: Այնինչ Դանիելի հիվանդության սրացումները հուսահատության ժամանակ են տեղի ունենում. Սյուրմեյանը պատկերում է այդ գաղտնի մեխանիզմը: Գրիմարը կարծես կյանքն է խորհրդանշում: Նրա ապաքինվելուց ու հեռանալուց հետո, իսկ դա վեպի միջնամասում է կատարվում, կյանքը առողջարանում տխրության շղարշով է ծածկվում, իսկ երբ արդեն «լիովին» առողջացած կրկին «վերադառնում» է մեքենայով շրջագայության տանելու իր հիվանդասենյակի ընկերներին, առաջին անգամ արտաքին աշխարհի տեսքով Միլդրեդին կորցրած ու հուսահատության գիրկն ընկած Դանիելը կրկին զգում է կյանքի կանչը: Դանիելի վերջնական հուսալքման ու մահվան դատավճռի պահին Գրիմարը մի անգամ էլ է հայտնվում՝ չքավորների հիվանդանոցից ընկերոջը Սանվյուի բարձրակարգ առողջարան տեղափոխելու, ուր անհուսալիորեն հիվանդ Դանիելը «հրաշքով» վերջնականապես բուժվում է: Հիվանդությունը նրան մահվան հետ սահմանակցող մեկուսացմամբ ինքնաճանաչողության բացառիկ հնարավորություն է ընձեռում, և բառիս կրոնական իմաստով, ինքնաճանաչողությունը Դանիելի համար Աստծու ճանաչողության ուղին է դառնում նաև: Վեպի սկզբնամասում նա շարունակ մահվան անխուսափելիության շուրջ էր խորհրդածում: Թվում է, թե մեր առջև իսկապես էկզիստենցիալիստական վեպի հերոս է այն իմաստով, որ հույսը հիվանդանոցի դռներից դուրս թողած՝

թոքախտի բուժումն իբրև մահվան որոշակի նախապատրաստություն է ընկալում: «Իհարկե ընդունում էր, որ միայն ինքը չէր մեռնելու: Այս առողջ, երջանիկ մարդիկ, ի վերջո, նույնպես մեռնելու էին, չնայած նրանցից ոչ մեկն, ըստ երևույթին, դեռ չէր գիտակցում» (Սյուրմեյան Լ. Զ., 2005): «Ինչո՞ւ եմ ամբողջ օրը մահվան մասին մտածում: Հանկարծ պարզեցի, որ տարօրինակ զգացում ունեմ, իբր այլևս Դանիել Մուրը չեմ, ուրիշ մարդ եմ, բոլորովին անծանոթ, և այդ մարդն ինձ վախեցնում է...» (Սյուրմեյան Լ. Զ., 2005): Անկարելի է անտեսել էկզիստենցիալիստական շերտերի առկայությունը վեպում, առավել ևս, երբ հերոսը էկզիստենցիալիզմի՝ օտարման ու ինքնաօտարման հասկացություններով էլ մտորում է հենց: Մահվան անխուսափելիության գիտակցումն ինքնաօտարում է բերում նաև, և պատճառն այն է, որ մարդն իր գիտակցության մի մասով և գուցե ոչ առանց իրական հիմքի հավատում է, որ անմահ է, և ինքը՝ իբրև մահկանացու, օտար է իր ներսի անմահին: Մյուս կողմից մահը օտարում է ուրիշներից. մահամերձն ինքն իրեն անդառնալի կերպով օտար է զգում իրենց անմահ կարծող մահկանացուներից: Սյուրմեյանի բազմաթիվ այլ տողերի մեջ կարելի է գտնել մահվան ապրումի այս հոգեբանական հարակարծույթը: Թոքախտով հիվանդը ուրիշների և սեփական մահվան ընթացքի դիտորդն ու արձանագրողը պիտի դառնա: Բայց Սյուրմեյանի հերոսը սոսկ հայեցող դիտորդ չէ, նա ակամայից կապվում է կյանքի հետ և դարձյալ ակամա կերպով ուրիշի մահվան կամ սպանության (Դանիելին թվում է, թե ինքն է սպանել Միլդրեդին) պատճառ դառնում, հեռավոր կերպով հիշեցնելով Կամյուի «Օտար»-ի հերոսին՝ Մյորսոյին, որի հետ նրան հարազատ է դարձնում նաև բնության ընկալումը: Դանիելը Մյորսոյի պես չի զգում, թե բնությունը ժխտում է իրեն, հակառակը նա իրեն բնության մեջ բնության մի մասնիկ է զգում, ինչպես և Մյորսոն: Վերջինս իրեն ծովի հետ էր նույնացած զգում, Դանիելը՝ անտառի ու ծառերի: «Մտածեց, եթե հիվանդ չլիներ, արդյո՞ք կգնահատեր մայրիների քնքուշ սիրալիրությունն ու անթերի շքեղ մայրական գեղեցկությունը: Բուժման դիմաց ստացած փոխհատուցում էր: Ծառերի մեջ բարություն ու անմահություն էր գտել և նրանց

կողքին ինքն էլ էր բարի ու անմահ կյանքով ապրում» (**Սյուրմեյան Լ. Զ., 2005**): Դանիելը կյանքը գնահատում է մահվան ներկայությամբ միայն: Նա զգում է, որ վերականգնվում է իր և բնության կապը: «Թռչուններին, նապաստակներին, սկյուռներին, թիթեռներին ու մեղուններին անառարկելի փաստ էր համարում, սակայն այժմ նրանք արյունակից նոր հայտնություն էին: Նրանց էր մերժենում իր զգայարաններով՝ վախենալով կրկին կորցնել: Նրանք իր հիվանդության և մահվան սարսափների հակաթույնն էին: Վերականգնել էր բնության հետ ընդհատված կապը. նշանակալի հաջողություն՝ հանուն առողջության մղվող պայքարում: Սենյակից համոտեսում էր մահաբեր այս քաղցրությունը, ինչպես մեղուն է ծաղիկներից նեկտար կորզում: Ուրեմն, բանականությունը մարդուն տրված առանձնահատուկ բարիք է ու նաև՝ նզովք: Թող զրկվեր բանականությունից, եթե ապրելու էր ծառերի, սկյուռների ու թռչունների նման բնական ու ճշմարտացի: Կատարյալ ներդաշնակ ու միասնական են, այնքան իմաստուն, որ վեր է մարդու հասկացողությունից, և նվաճել են իրենց բաժին դրախտը (**Սյուրմեյան Լ., 2005**): Բայց բնության հետ իրեն ներդաշնակ զգացող Մյորսոյից Դանիելը մի տարբերություն ունի: Մյորսոն մահից առաջ հրաժարվում է ընդունել հոգևորականին և առանց հաղորդության էլ նախընտրում է մահանալ, իսկ մահամերձ Դանիելը դարձի է գալիս: Այսպիսով, Սյուրմեյանի վեպը, եթե որոշակի աղերսներ ունի, ապա ոչ թե արեւիստական, այլ կրոնական էկզիստենցիալիզմի հետ, ըստ որի մարդը Աստծուց լքված ու օտարված է ապրում: Բայց այսպես է միայն հուսալքված Դանիելը գտնում Աստծուն: Նրա կյանքը էկզիստենցիալ վեպերից շատերին բնորոշ հույսի ու հուսալքման անընդհատ հերթագայման բովոլ է անցնում՝ մինչև վերջնական հուսալքում, ապա և ապաքինում: Կաֆկային նվիրված «Հույսը և աբսուրդը Ֆրանց Կաֆկայի գործերում» էսսեում Կամյուն գրում է. «Կրկին մենք առնչվում ենք էկզիստենցիալիստական մտածողության բացահայտ պարադոքսայնությանը, որն, օրինակ, Կիերկեգորն այսպես է արտահայտում. «Պետք է ցմահ մեռցնել

երկրային հույսը՝ ճշմարիտ հույսով փրկվելու համար» (**Կաֆկա Ֆ., 1991**): Սյուրմեյանի մահամերձ ու հուսալքված հերոսը դարձի է գալիս, կորցնում է իր ես-ն ու գտնում այն Քրիստոսի մեջ: Այսպիսով, Դանտեի նման անցնելով դժոխքի ու քավարանի միջով, Դանիելը հայտնվում է դրախտի շեմին ու հարություն առնում, այսինքն ապաքինվում է: Այդ ճանապարհին Դանտեի հերոսի նման նա կորցնում է իր սիրած էակին, թեև նրա պատկերը միշտ վառ է պահում իր մտքում, ապա վերագտնում է նրան վերջում: Կարելի է նկատել, որ նրան կորցնելուց հետո Դանիելը կորցնում է բնության հետ իր վերագտած ներդաշնակությունը, հայտնվում քաղաքում, այլասերված կանանց հետ կապ հաստատելով կրկին հայտնվում կյանքի հատակում և նորից հայտնվում թոքախտի բուժարանում, այս անգամ արդեն մահամերձ ու հուսալքված: Սյուրմեյանը կարծես երկրային կյանքի հետ կապվածության ունայնությունն է պատկերում, ցույց տալիս, թե ինչպես է ճշմարիտ սիրո միջոցով կատարվում մարդու վերակենդանացումը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թոքախտի և թոքախտով հիվանդ մարդու ապրումների ու խոհերի պատկերումը 19-րդ դարի գեղարվեստական գրականության մեջ արդեն իսկ որոշակի փոխաբերական ընդհանրացումներ է ստանում: Եթե 19-րդ դարի գրականության մեջ թոքախտը կարելի է համարել «համաշխարհային վշտի», ապա 20-րդ դարի ստեղծագործություններից շատերում, այդ թվում և Լևոն Զավեն Սյուրմեյանի «98.6°» վեպում, այն պատերազմի փոխաբերություն է դառնում:

Թե՛ պատերազմը, թե՛ թոքախտը մահվան անընդհատ ու համատարած ներկայությամբ մարդուն գոյաբանական խնդիրների՝ սեփական ես-ը ճանաչելու, անհատականության կամ պարզապես խառնվածքի դրսևորման պայմաններ են ստեղծում, և այդպես է ինքնաճանաչողության ու Աստծու ճանաչողության հասնում Լ. Զ. Սյուրմեյանի «98.6°» վեպի հերոսը:

Թոքախտի բուժարանը, որպես փակ, մեկուսի կենսատարածք թե՛ մարդկային համակեցությունը, թե՛ մահը՝ որպես գոյաբանական ֆենոմեն խորությամբ հետազոտելու պայմանական միջավայր է դառնում՝ մարդկային

համակեցության ու կեցության միկրոմոդել, որի հիման վրա մարդկության էկզիստենցիալ խնդիրներն են քննվում: Սյուրմեյանը էկզիստենցիալ խնդիրները, որոնք բեկվում են անհատի ներաշխարհում, սոցիալական հարաբերությունների ֆոնին է քննում:

Մերթ հույսով ապրող, մերթ հուսալքման մեջ ընկնող, մերթ բնության հետ իր ներդաշնակությունը վերագտնող, մերթ քաղաքի թոհուփոհը տենչացող, մերթ դեպի մենություն, մերթ դեպի հասարակություն ձգտող, մերթ հոգևոր արժեքների ծարավ, մերթ սեռական ցանկություններից տոչորվող հերոսն ի վերջո ապաքինվում է թե՛ ֆիզիկապես, թե՛ հոգեպես, և այդ ապաքինումը, որ պատերազմի վերջին տարում է կատարվում, հնարավորություն է տալիս թոքախտը Սյուրմեյանի վեպում դիտարկել որպես պատերազմի փոխաբերություն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Կաֆկա Ֆ., (1991),** Դատավարություն, Երևան, «Ապոլոն» հրատ.:
2. **Մուրադյան Ա. (2013),** Անգլիագիր գրողի կենսագրության հայելին, «ՎԷՄ» համահայկական հանդես, Ե(ԺԱ) տարի, թիվ 1 (41) հունվար-մարտ, էջ 117-130:
3. **Շահնուր Շ. (2016),** Երկեր, հատ. Ա, Երևան, «Ազգ» հրատ.:
4. **Որբունի Զ. (2020),** Հալածուածները, Երևան, Աշոտ Հովհաննիսյանի անվան հումանիտար հետազոտությունների ինստիտուտ:
5. **Սյուրմեյան Լ. Զ., (2008),** Արձակի տեխնիկա. չափ և խենթություն, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ.:
6. **Սյուրմեյան Լ. Զ. (2005),** «98.6°», Երևան, Հայաստանի գրողների միության հրատ.:
7. **Манн Т. (1959),** Волшебная гора, Собрание сочинений, том 4, Москва,, Государственное издательство художественной литературы.
8. **Сонтаг С. (2016),** Болезнь как метафора, Москва, Ад Маргинем Пресс.

9. **Томашевский Б. (1996)**, Теория литературы. Поэтика, Москва, Аспект Пресс.
10. **Bolstad Ø. (1947)**, Den røde begonia, Oslo, Gyldendal.
11. **Saribekyan H., Ordukhanyan E., Sukiasyan H. (2023)**, Wisdom, The loss of individuality in war: Existentialist approach 4 (28), pp. 15-26: <https://wisdomperiodical.com/index.php/wisdom/article/view/1035>

REFERENCES

1. **Kafka F. (1991)**, Datavarowt'yown /The Trial/, Yerevan, Apolon ed.
2. **Muradyan A. (2013)**, Angliagir groghi kensagrowt'yan hayelin /The mirror of the biography of an English-language writer/, "VEM", Pan-Armenian magazine, 5 (11) year, number 1 (41), januar-march, pp 117-130.
3. **Shahnour S. (2016)**, Erker /Collected Works/, Vol. 1, Yerevan, "Azg" Publishing House.
4. **Vorpouni Z. (2020)**, Halac'owac'nery' /The Persecuted/, Yerevan, Institute of Humanitarian Studies named after Ashot Hovhannisyan.
5. **Surmelian L. Z. (2008)**, Ard'aki texnika. chap' & xent'owt'yown /Techniques of Fiction Writing: Measure and Madness/, Yerevan, "Gitutyun" Publishing House of the National Academy of Sciences of the Republic of Armenia.
6. **Surmelian L. Z. (2005)**, «98.6°», Yerevan, Publishing House of the Writers' Union of Armenia.
7. **Mann T. (1959)**, Volshebnaya gora /The magic mountain/, Collected Works, Vol. 4, Moscow, State Publishing House of Fiction.
8. **Sontag S. (2016)**, Bolezn' kak metafora /Illness as metaphor/, Moscow, Ad Marginem Press.
9. **Tomashevski B. (1996)**, Teoriya literatury. Poetika /Theory of Literature/, Moscow, Aspect Press.
10. **Bolstad Ø., (1947)**, The red begonia, Oslo, Gyldendal ed.

11. Hrachya Saribekyan, Emil Ordukhanyan, Hayk Sukiasyan, (2023), Wisdom, The loss of individuality in war: Existentialist approach 4 (28), pp. 15-26:

Hrachya Saribekyan

**Tuberculosis as a metaphor of war in the novel by
Levon Zaven Syurmelyan's "98.6°" novel**

Conclusion

Key words and expressions: *metaphor, hospital, tuberculosis, existentialism, nature, war, death, alienation.*

The article represents the discussion about the English novel "98.6°" written by the Armenian-American writer Levon Zaven Syurmelyan. The novel depicts the life of an Irish person by the name of Daniel Moor who was treated from pneumonia in one of the American hospitals.

For the first time in the literary studies the author considers pneumonia as a metaphor of war which parallelly develops in accordance of the actions going on the backstage of the novel. Thus it opens a door to analyze the novel in the context of existentialism. Either war or pneumonia with their extensive presence makes a man to face existential questions, put forth to express his own personality, manifestation of temperament or discernment and self-cognition. The article reveals the way how Syurmelyan's hero eventually makes his choice between the ruinous human instincts and the high spirituality, the nature and the civilization, the hope and the desperation. In the long run he finds the self-cognition as a way to salvation. Syurmelyan believes that salvation of the man is hidden in the hope, the spirituality and nature that conditions the "miracle" of the cure of the hero. The hospital of the poor in which he appears after wasting his vital energy among prostitutes remind us about the hell of corrupt social life. The hero succeeds to "be resurrects" from living death after finding Christ in his life.

Грачья Сарибекян

Туберкулез как метафора войны в романе Левона Завена Сурмеляна «98,6°»

Заключение

Ключевые слова и выражения: метафора, больница, туберкулез, экзистенциализм, природа, война, смерть, отчуждение.

В статье рассматривается роман «98,6°», написанный на английском языке американским писателем армянского происхождения Левонем Завеном Сурмеляном. В романе изображен период из жизни молодого ирландца по имени Дэниел Мур, оказавшегося в американских больницах с туберкулезом. В статье впервые в литературоведении предпринята попытка рассмотреть туберкулез, как метафору войны, происходящей за кулисами романа, что позволяет проанализировать роман в контексте экзистенциализма. И война, и туберкулез при постоянном и повсеместном присутствии смерти ставят человека перед экзистенциальными вопросами, подталкивают его к активному проявлению своей личности и темперамента или рассудительности и самопознания. В статье показано, как герой Сурмеляна наконец делает свой выбор, выбирая самопознание, как путь спасения между инстинктами, разрушающими человека, и духовным, возвышающим его, природой и цивилизацией, надеждой и унынием. Сурмелян считает, что спасение человека заключается только в надежде, духовности и природе, чем и обусловлено «чудо» выздоровления героя. Санаторий для бедных туберкулезных больных, в который он попадает после первого лечения в результате растраты сил, необходимых для окончательного выздоровления от туберкулеза, напоминает низшие круги социального ада, из которого герой способен «воскреснуть» из живых мертвецов только после обретения Христа.

Հրաչյա Սարիբեկյան - Բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտ, գիտական

հետաքրքրությունները՝ 20-րդ դարի հայ և համաշխարհային գրականության կապեր, էկզիստենցիալիզմի փիլիսոփայություն և գրականություն, շուրջ 30 գիտական հոդվածի հեղինակ, hrachsar@mail.ru, hrachsar79@gmail.com, 0000-0003-4825-5304:

Грачя Сарибекян - Кандидат филологических наук, Национальная академия наук республики Армения, Институт литературы имени М. Абеяна. Сфера научных интересов: литературные связи армянской и всемирной литературы 20 века, философия и литература экзистенциализма: Автор около трех десятков статей. hrachsar@mail.ru, hrachsar79@gmail.com, 0000-0003-4825-5304.

Hrachya Saribekyan - Doctor of Philology, National Academy of Science of Armenia, Institute of Literature named after M. Abeghyan, Scientific interests: literary connections between Armenian and world literature of the 20th century, philosophy and literature of existentialism, hrachsar@mail.ru, hrachsar79@gmail.com, 0000-0003-4825-5304.

Խմբագրություն է ուղարկվել 13.06.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 30.06.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.